



№. 42.



ԱՊՐԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԲԱՆԱԲԱՆՈՒ

ՏԻՍՏԻՄՈՒՄ

W. J. A.



ՍՄԱՐՍ ԲԻՐՐՍ

Խմբագիր - Տիգրան

ԱՂԵՔԱՆԴԻՍ
Արքեպիսկոպոս



S. Eurat
Rédaction
"PUNIG"
Alexandrie

ԲԱՑԱՌԻԿ ՊՐԱԿ

ՕՐԱԹԵՐԹԻ ՎԵՐԱՇՈՒԵԼՈՒՆ ԱՌԹԻԻ

ԶԵԹՈՒՆԻ ՀԱՄԱՐ

Մեր արի լուսնայինները պատկեր
փրկեցին մեր ազգին, կը գրէր անց-
եալները Բարեղի մեր ազնիւ եղբայ-
րակիցներէն մէկը. իրաւ, 1895-96 թ
Մեծ կռիւը՝ փառաւոր սպայոց մը
առաւ ցեղին մարտային առարկու-
թեանը. քանի մ'ամառան գիւցազնային
գիտազրութիւնը Զեթունի՝ պիտի մնայ
միշտ անջնջելի, սոկեառա էջ մը ժա-
մանակակից Հայկերէն մէջ:

Զեթուն յաղթեց:

Սա կսին, յաղթեց Զեթունէն շուե-
ցաւ, գեռ շատ տանն չ'անցաւ, ազիբ-
ները խարշառոզ ազագահը տաղնա-
պին. — Մանկախն կը ջարգուի:

Առիւծի կորիւնները մէկիկ մէկիկ
կը հնձուին ծաղկախոտէն. սրղիններն
անոնց սքանը ինկան փառքի գաշար:

Ու հիմայ Որբ Լեւը սուզի մէջ է:
Պատերազմին կտակածները կը մեան
Այլիներ, Ռբեր, Թշուաւներ, Հի-
ւանդներ: Կիտամերի, գաղկահար ու
նիհար, ինկած՝ սար ու ձոր, կը մու-
րան հիմայ, ու շեն կրնար գտնել կը-
տորիկ մը չար հաց. այլիները, գէն-
քի ընկերուհիները Մարտիրոսներուն,
սր Ս. Պատերազմը պատերազմեցան:

Քնցաւիններու մէջ փաթթուած, բու-
կատ, այդ թշիկները թռչեալ, մաա-
ղաչ Որբուկները... Անթի՛ կն, ա

նթի՛, իրենց յուսահատ մայրերուն
գիրկը, անոնց կ'ըստ ծունկերուն վրայ
կը մարին, կը մեանին...: Ասվին պա-
կաւը՝ Ծաղկախոտը լրացուց արգէն:
Ահա՛ն է Աւերբը և տեսական
Աղէտը:

Սա գիմայի տաղանցութիւնը գի-
տեցէ՛ք. բլուրներն ի վեր մտողցի, զուր
կը փորձեն վեր, աւելի՛ վեր ելլել.
Թշուաւներուն փոսաչուի կրամն է,
կմախացած, չըջուն գիակներ, տեսա-
նելի ու շոշափելի ուրուս կաննէ՛րը.
ա՛խ, փերապրտոցներն են տանը,
Մեծ կռիւն. քաղաքը թողեր, լու-
նէրն են ինկեր, խոտեցով ու աբ-
մաաներով կազկն գեռ քաշքշել իրենց
ա՛յնքան գտնեացած ու ա՛յնքան առ-
առապող գոցութիւնը:

Իսկ Հիւանդներ՛ը...

Ձը կա՛յ բծիշկ, ս՛չ ոչ հիւանդա-
նաց: Առանց գեղի գարմանի, մէկիկ
մէկիկ կը թափթփին, անբի պէս
կանաչ կանաչ, գեռ չը գեղնած, ե-
րիտասարգութիւնը լեռին:

Ահա՛ լի՛ այժմէսութիւն:

Չորս ամիսներ անցան այն գուժ-
կան նամակին վրայ, սրուն քանի մը
տողերը հրատարակուեցան նոյն այս
էջերու մէջ: Այդ նամակը մէկ տա՛-
ստան մէջ աշխարհին չըջանն ըրաւ:

Գահիրէն առաջին արձագանգը տը-
լաւ մեր կոչին. Տիար Պեարոս կա-
րապետեան, 25 անգլ. ոսկի զրկեց
Ալզ. Պատրիարքարանը, իբր անվի-
շական դարման ծաղկախտին դէմ ու
զործածուելու համար պատուաստի:

Աղեքսանդրիան, աւելի տեսական ու
հիմնական բան մընել ուզեց. ըն-
կերութիւն մը կազմեց, Չեքունի
Բարեսիրացը, նախաձեռնութեամբ
Ֆանուզի քաջարի Հ. Բարթողիմէոս
վ. Թագաճեանի, ո՛չ թէ կազմակեր-
պելու համար սոսկ հանդանակութիւն
մը — ինչպէս որ փորձուած է կարծել
արտասահմանի հայ մամուլը — այլ
իրագործելու համար սուրբ նպատակ
մը, այն է. խնամել ու դաստիարա-
կել Չեքունի որբերը, պատրաստել ա-
նոնց տեսական ասպետներ, տնո-
ւեց թշուառութիւնը, օգնել Չեքու-
նի, պատահական աղէտներու հակ-
դէպ: Ու այս զեղծիցի, օգտակար ու
վսեմ նպատակին շուրջը հաւու-
րուած է ո՛չ միայն Աղեքսանդրիոյ
երիտասարդութենէն մաս մը, ինչպէս
որ դարձեալ սխալմամբ գրուած է
արտասահմանի քանի մը թերթերուն
մէջ — այլ ամբողջ Աղեքսանդրիոյ ա-
սողջ հայ հասարակութենը. ամեն
անոնք, որոնք սիրա մունին արու-
փող՝ Արծիւի Բոյնին դէմ:

«Բարեսիրաց»ը ճամբայ ելած է
Զեթունը՝ Սովին, Ախտին, Թշուա-
ռութեան, մէկ խօսքով, տեսող Չարի-
քին դէմ պատասպանելու հաստատ,
անխախտ որոշումովն ու անփոփոխ
նպատակովը: Վաղը կանոնադիրը
հրատարակուած, շրջաբերուած, պի-
տի աւելի պարզ ու յստակ դադարաբար
մը տայ բոլոր ազնիւ անդամակցող-
ներուն:

Եղիպտոսի համար այսպէս, անց-
նինք արտասահման:

Բարից, մեծանուն լ'Արմենին, ա-

ռաջին անգամն ըլլալով Զեթունի հա-
մար՝ հանդանակութիւն մը բացու-
առաջին ցուցակը ծածկուեցաւ իր,
լ'Արմենիի ստորագրած 100 ֆրան-
գով, երկրորդ ցուցակը հասած էր
564 ֆրանգի, վերջերս ստացուած
Յունիսի թիւին մէջ հրատարակուած
Գ. ցուցակին համազումարը տեսանք
հաճաքով, 1135 ֆր. 75: Նոյն թեր-
թը յարածուն եռանգով ու դիտակից
ուժով մը կը շարունակէ իր փրկա-
բար, ազգօգուտ գործը. պատիւ իրեն:

Անահիճը, սրտաշարժ, կրկնուած
ու թելադրական կոչերովը ցնցեց ա-
նըզոյ հողիները, վերաբրժնցուց
թմրած սրտերը, շարունակելով նը-
վիրել գեղեցիկ էջեր Զեթունի հա-
մար ու կը բազմապատկէ իր արդէն
վայելած համակրանքը:

Բարիցի բարի Հովիւր Տ. Վառ-
չապուհ Գիպարեան, դազար Հունի,
արդէն ձեռնարկած է հանդանակու-
թեան, որ, վստահ ենք, պէտք է
ցորդ հասած ըլլայ պատկանելի գու-
մարի մը:

Պուլիարահայ թերթերը, առանց
բացատրութեան, զրեթէ ամեն թիւերու
մէջ սինականեր կը նուիրեն Զեթունի
համար, հրակերելով զազթականու-
թիւնը մասնակցել Զեթունի համար
բացուած հանդանակութեան: Մեր նոր
եղբայրակիցներէն Հայաթերքը, Վառ-
նայի թագ. խորհուրդին «Օգնութեան
հրատե»-ը հրատարակելով, կը գնա-
հատէ անոր գովելի ու հետեւելի ըն-
թացքը: Նոյն թերթը մէկէ աւելի
անգամներ խմբագրական տեսութիւն-
ներով վառ կը պահէ Պուլիարահայ
զազթականութեան եռանդազին շար-
ժունը, Զեթունի օգնելու տարածերժ-
օրէն նուիրական պէտքը շեշտելով:

Չը մոռնանք ամերիկահայ գաղ-
թականութիւնն ու իր ցոյց տուած
ո՛չ նուազ արդիւնաւոր ջանքերը Զե-

Թունի համար: Եւր Աշխարհի մեր հայրենակիցներն արդէն քանի մը տարի առաջ ստացած են ուղտը բարենիշ մը, հանգանակութեան մը համար զոր դուրս հանեցին ա՛յնքան յաշտութեամբ և որուն արդիւնքը, զիտենք, տեղը հասաւ ճիշդ ժամանակին:

Պուլկարիա, Ռումանիա, Իտալիա, Ֆրանսա, Անգլիա, ևն, բովանդակ եւրոպայ, միևնոյն տար վերաբերումը դէպ ի Զեթուն: Ժամանակի նշան մը չէ՞ ասիկայ. Չայնը չէ՞ հերոսներուն թափուած մարտը արիւնին, որ հիմայ կը խօսի, բարձր, հզօր, կշռամբող ճայնը կարմիր Արիւնին:

Ու երբ, այս ընդհանուր, միահամուռ ներդաշնակութեանը մէջ գործունէութեան ու խանդավառութեան, հանդիպինք Մամուլի խորթ զակի մը, որ անկեղծ սլացները հեզներու չափ լրբանայ, չը ցաւինք ու չը զարմանանք. հոմէրի մը գէժ Զօյիլ մը պէ՛տք է... հաչելու համար:

Այս երեսիթը նոր չէ, ո՛չ ալ տարօրինակ, մեր բարբերուն մէջ:

Դառնանք շարժումին, որ հետզհետէ կ'ընդարձակի: Պիտի ներուի՞ արդեօք դիտել տալ թէ՛ այդ շարժումը, լոկ հանգանակութեանց համար, պիտի չի կրնայ տալ սպասուած գարձանը: Հանգանակուած գրամները, այս՛, կրնան ժամանակի մը համար, ամօքել թշուառութիւնը, բայց Չարիքը, բայց Աղէտը, կը մնան. Տեղ Չարիքը, արմատական Աղէտքը, տեւական Բարիք, արմատական Դարման կը պահանջեն: Հանգանակութիւնները մէ՛կ բանի կը ծառայեն. իբրև նախնական գրամագլուխ, Արտասահմանի մէջ, մէկ նպատակով հիմնուած լնկերութեանը, որ բնակահարսը պիտի ունենայ իր ծրագիրը,

գործելու դիւրութիւնները: Ո՛րքան օգտակար, որքա՛ն նպատակաշարժար պիտի ըլլար, այդ հանգանակութեանց մասնակցող ազնիւ հայրենակիցները — Արտասահմանի ամեն անկիւններուն մէջ ո՛ւր հայ կայ, — անդամ արձանագրել ու ճանչնալ Աղեքսանդրիա հիմնուած «Զեթունի Բարեսիրաց»ին, որ արդէն սկսած է ունենալ իր մասնաճիւղերը, և որ, մանաւանդ, դիւրին միջոցներ ունի Զեթունի ուղղակի հասցնելու օգնութիւնները: Մեշա դիւրին է զրամը զգիել Պոլսոյ Պատրիարքարանը կամ կելիկիոյ կաթողիկոսարանը: Էսկան, կենսական է նախ, անյապաղ կազմել «Բարեսիրաց»ի մասնաճիւղեր, որոնք գործեն, յարատեւեն մէկ նպատակով. ՕԳՆԵԼ ԶԵԹՈՒՆԻ: Ու գործեն ԶԵԹՈՒՆԻ ՀԱՄԱՐ:

ՅԱՅԷՆ - ՄԻՕԻ

ՍՊԱՆՆՈՒԹԵԱՆ ԱՌԹԻ

Քանի որ զէնքերը, մահու գործիքները, տակաւին մեծ զեր կը խաղան մարդկային յարաբերութեանց և քաղաքակրթութեան արդի վիճակին մէջ, հարկ է գէթ գիտնալ թէ ի՞նչ պարագաներու տակ ներելի և արդարանալի է անոնց գործածութիւնը:

Եթէ քաղաքակիրթ հոգակուած պետութիւններու միջև ծագող քաղաքական ու արեստեական վէճերը՝ զիտ ա՛յսօր՝ իրենց վճիռը կը սպասեն թնդանօթներու բերձէն, բընական է որ տկար ու ճնշուած ազգերը աւելի մեծ իրատունք մ'ունին՝ իրենց տարուականքներէն աչատելու համար իրենք ալ դիմելու զէնքի զօրութեան — բռնի միջոցներու:

Այո՛, զէնքի շաչիւնը միայն կը լսեն բռնապետներու իրացած ականջները: «Զ'արկ որ մտիկ ընենք», «Տագլմէ՛ որ տիրանաս».

ահա՛ մամանակակից պետութիւններու բմբռնութիւնը՝ Արգարութեան և Իրաւունքի Պետութիւններու այս վարդապետութեան հանդէպ կ'արդարանայ ամէն յեղափոխութիւն: Արդէն պահպանողական մտքերն անգամ ընդունած են թէ՛ «Ապստամբութիւնը ճնշուածներու սուրբ իրաւունքն է»:

Այս սուրբ իրաւունքին ծնունդն է ահա Հայ Յեղափոխութիւնն ալ: Այս բմբռնութիւնն է որ հայ յեղափոխական գործին՝ Ս. Գրործ զիւթիչ և յանկուցիչ անունն ալ արուած է:

Յաւալի է ոսկայն տեսնել որ այդ Ս. Գործը մեր մէջ կամաց կամաց Աւետարթ Գործի ձեեր կառնէ. մաքուր ու գալափարական յեղափոխականութիւնը հեղհեղակ կայլասերոյի ու կապականոյի, և այս՝ խիստ վտանգաւոր, վրդալեցոյցիչ համեմատութեամբ մը:

Չէքքը՝ որ մեր ձեերին մէջ կ'անենք թշնամիին զէմ ուղղելու համար՝ սկսած ենք գործածել մեր հարազատ եղբայրներուն զէմ, դաշոյնը՝ հարստահարիչ թշնամիին համար պատրաստուած՝ խօշական մուկերութեամբ մը կը մխննք մեր արեւակիցիներու կողին մէջ:

Յեղափոխականութիւնը վարկաբեկող ազատութիւնը կարծես բաւական չէին. դեռ վերջերս՝ բնագործիկ ու եղբայրագաւ մութեան մը կրկնակի գայթակղեցոյցիչ կընքումը և խզումը բաւական չէին կարծես. հիմա ալ կրտսի՛ կղբայրաւայսն կ'աւր: Անպին բան կոտի գաշար բարձրին թափուր և ամայի թողած, Ս. Գործը բարձրութիւն մտայած և ուրացած — ատկութեամբ կարացած — ելած ենք իրարու զէմ մեր ալտոտ հաշիւները մաքրելու... Դաշոյնի ծայրով: Եթէ զէմ այս գաւազարական մարդասպանութիւններու սիակի զոհերը ըլլային պատակաւոր ու բաժանումի սկզբնապահան նոյն այդ մէկ քանի վատ խաշագործները Յեղափոխութեան, պիտի գետարանայինք Ոճիւր անունով սրակիլ այդ սպանութիւնները, հրապարակը ընչ մը մաքրուած պիտի ըլլար,

բայց այդպէս չէ. այդ զոհերու շարքին մէջ կային մինչև երկի՛ Երուսաղէմը ու ահաբեկիչ Սմբատներ. այսօր այդ շարքին մէջ կ'աւելայ Եւսեփէն-Միսոյի պէս մաքուր յեղափոխական մ'ալ:

Մարդ մը՝ որ Միսո մը կը սպաննէ՛ յեղափոխական մը չէ՛ այն, այլ ոճուրագործ մը, ու մանաւանդ ամենագոյնի տեսակէն վասշուէր մը, քանի որ բարեկամ ձեռնայով՝ դաւադրութեամբ կը գործէ այդ անորակելի ոճիրը: Յուրայի համարյոք վերջ գաշոյն... Վասակ մը ու Մեհրուբան մը անգամ չպիտի կարենային ընել այդ բանը: Ճակատ առ ճակատ կ'աւելու բաշտութիւն չունեցող, մութին՝ մէջ գործող այդ սողունները ոսկայն Յեղափոխական անունին տակ կը շրջին... հրէշները:

Ի՞նչ, ի՞նչ պիտի ըսեն հիմա երկրի մաքուր յեղափոխականները՝ երբ լսեն Միսոյի սպանութիւնը: Ի՞նչ պիտի ըսեն Մուշն ու Սասունը՝ որոնք կը պաշտէին Արապոյի ու Լեւոնի ընկեր, թուրքերու ու քուրտերու սարսափ՝ իրենց Տերքեւանոյց Միսոյ...: Ի՞նչ պիտի մտածէ Չորը-Մարգուան՝ երբ լսէ իր հերոսական զիմադրութեան պէտար կողմակերպիչ կարիճ Եւսեփէնի եղբրական մահը: Էս ո՞վ է որ պիտի առնէ Սասունէն մինչև Կիլիկիա գաղցուած այդ արդար սըրտալքութեան և իրաւայի գայթակղութեան տխուր հետանքները:

— Դեղազարբար, ո՛չ այդ անարդ մարդասպանները, այլ հայ յեղափոխական գաղափարը, Ս. Գործը ընդհանրապէս:

Արդէն Շահէնի սպանութիւնը ինքնին անփոխարինելի կորուստ մ է թէև, աւելի սարոսափելի են այդ սպանութեան բարոյական հետանքները, որոնք ազիտաբեր հարուած մ են հայ յեղափոխութեան վարկին զէմ:

Պէտք է, անհրաժեշտ է որ հայ ժողովուրդը լուսաբանուի այս սպանութեան մասին. պէտք է ի լոյս գան սպանութեան շարժառիթները, պարագաները և մանաւանդ յայտնուին ու մերկայուին բուն գաւազիւրները,

մարդասպանները: Մինչև հիմա հասած տեղեկութիւնները կցկտուր են և անբաւական՝ եզրակացութեան մը յանգեցնելու: Պէտք չէ մտթի մէջ թողուի այս աննեքելի ու ճիշտ ալ: Եթէ կառավարութիւնները ոճ-րապործներու համար սահմանած են՝ բանա, կախազան, աքսոր և ուրիշ պատիժներ, հայ ժողովուրդը որ սեփական կառավարութիւն մը չունի, ինքն ալ պէտք է գտնայ միջոց մը սզգուշին գառապարտելու այս ոճ-րապործական արարքներու ախար հեղինակները, և այս՝ ի սէր յեղափոխութեան, ի սէր յեղափոխական գաղափարին, որուն վերջնական վարկաբեկումը և սնանկացումը պիտի լլղար այսպիսի քստնեղի ոճրապործութիւններու կրկնութիւնը:

Իմ կարծեօք, այդ միջոցը պէտք է ըլլայ արտասահմանի ազատ Մալուրը: Մամուլը պէտք չէ թողու որ անզուգական Շահէն-Միւշի սպանութեան պէս գառապարտելի գործ մը աննշմարելի անցնի և մոռացութեան մասնախշտով իր արգոսեան աչքէն զտլ պէտք է մամուլը գործին խօրը թափանցի և երևան բերէ իրողութիւնները իրենց իսկական երեւոյթով: Այս՝ պէտք է յուզուի հայ հանրային կարծիքը, պէտք է արթննայ հայ հանրային խիզճը. պէտք է վերջապէս հայ յեղափոխականներն ալ ճանչնան թէ բացարձակ լիազօր և անպատասխանատու չեն իրենց գործունէութեան մէջ, այլ նախընտրելի դատաստան մը կայ որ, ինչպէս կարող է Եւրոպայի մէջ ստապարիչ դահլիճներ ու կառավարութիւններ, կարող է և պարտի մեր մէջ ալ՝ վերահսկել յեղափոխականներու գործերուն վրայ և ի հարկին գառապարտել զանոնք:

Մ. ՏԱՄԱՏԵԱՆ.

ԹԱՆԹԱՅԻ ՀԱՅԵՐԸ

Շար. 38 ք/ի էն էր վերջ

Յարգեանք բացատրութիւնները ու միևնոյն ասան օրհները հայերու քով այլևս տա-

րածերօրէն մենաշօրհ գործած ծխախաճառս թիւնը, որ մեր աղետաբեր օրերուն մէջ հայ և պաշտօն մատակարարեց մեր շմարած գաղթական եղբայրներուն:

Արդար հպարտութիւն մը կը զգանք՝ ա՛մն անգամ որ սրտազնոյզ առիթը կ'ուսնենանք յիշելու Սուտանական արշաւանքին սկիզբի օրերը, երբ ծխող աշխիւր, կարծես կոյր նախապաշարուժով մը իսխոսացած, «Տուխան ապու զազայ, Մաթոսեան արմալի» (արման) կը պողար շարնախանձ արիւնկզակ յոյն ֆալերիւնուներուն երեսին:

Ո՞վ եղաւ հիմա օգտուողը և ի՞նչ՝ այդ թունաւորոյ խոտը գորսերն ալ տարածողին յանդգնութեան արլիւնքը: Արդիւնքը, արևի պէս փայլող ճշմարտութիւն ս'ընդնին, այն եղաւ որ այդ ապրանքին գերերջանիկ աերնքը, զեռ 15 տարի կայ, մեղի պէս հասարակ մահկանացուներ, սկիզբները շատ համեստ նիւթական կարուչութեան աէր, շատ անգամ սնանկանալու մօտ ալ եթէ կ'ուզէր, հարստացան շնորհիւ իրենց ստիպան ձեռնակրկութեան, եղիպտահայ գաղութին՝ ուղղակի թէ անուղղակի՝ բարերարներ հանդիտանալով, բանի որ գործ հայթայթեցին հայ ձեռքերու որոնք անգործ մնացած էին, ուղեկոր, և յատահատ. շրջակաները բազմաթիւ մասնաճիւղեր ունեցան՝ քիչ մը ա՛մն կողմ հայերու խումբ մը ցանցեցելով, հան սր որ հայուն անունը զրիթէ Չինացիին հատասար բան մ'եր:

Ամարեօն գրողի մեր խոնարհ ձգտումով րապրական ապարկէլին վրայ երևալու օրէն ի վեր՝ չենք կարծեր ս' և է մէկը, անտրման տեղ, զխասկցօրէն փաղաքշկու սասրնութիւնը թալաարած ըլլալ մենք մեղի, և այսօր շողոքորթելու համար չէ որ զիրենք փառաբանել կ'ուզենք:

Փա՛նք և պատիւ տրեմն Մաթոսեաններուն և իրենց ազնիւ նմաններուն, Մեղրեանն, Իվիլիքեան, կամսարական, կէն, Եղիպտահայ գաղութին բարերարները:

Գաղթական հայեր, դորձաւորներ, ւի-
կարանիներ, ամեն անգամ որ պիտի յիշեն
իրենց թշուառութեան անցեալ անպիտան
օրերը, թող չի մոռնան օրհնութեան մըր-
մունջներ բարձրացնել զէպ ի վեր, ու թող
ձայնակցին մեզի, զէթ այսօրուան համար:

Փա՛ոք և պատիւ այս պատուական Հա-
յերուն:

Դեռ քանի մը տարի առաջ, որչափ որ
սխալած չենք ըլլար մեր յիշուութեանը մէջ,
Թանթայի հայերու ամբողջ թիւը առանձն
աւելի եղած ըլլաւ չ'էր, և այսօր, թերև,
առանց Մաթոսեանի մը, Թանթայի հայ
գաղութը ընթերցողներուն ներկայացուցած
պիտի ըլլայինք մէկ քանի տարի առաջուան
պիտարարքար փառաւորներու աշխարհին
մէկ անկիւնը ինկած տասնեակ մը հայեր...
Եւ, առա՛ջ, այս զարշնչի տևարանը պիտի
պարզուէր մեր առաջ Թանթայի համար, որ
Եգիպտոսի մարգաշա, ամենակարևոր ու
շահաւէտ կեդրոններէն մին է, Գահիրէն
երկաթուղով մէկ ու կէս ժամ հեռու: Թան-
թայի կարեորութիւնը շատ աւելի կը շեշ-
տուի, ամեն տարի, երբ երանելիի մը,
Շէյխ Սայիա Պիտավի, Մուշիսի սօնա-
խըմբութիւնը կը կատարուի. հարիւր հազար
կը հաշուուի թիւը Եգիպտոսի ամէն կողմէն
հոն վազող մտեանց ամբսխին, որ պիտի
զայ իր պաշտամունքը կատարելու ու միև-
նոյն ասեմ գրամ մտիելու համար: Ալ ե-
րեակայեցէ՛ք շահը, որակով ու քանակով:
Դժբաղդարար այս Մուշիսի արտակարգ
սօնախմբութիւնը տեղի ունեցած չէ երկու
տարիէ ի վեր, առողջապահական վարչու-
թեան անթուրատութեամբ, ինչ որ շատ
զյգոհ թուած ըլլալու է տեղւոյ իփլիքնեան
մասնաճիւղը: Անտարը՝ մեծ մասամբ՝
Հրեաներուն, Յոյներուն և Սուրիացիներուն
ձեռքն է:

Ափրիկեան միսիօնարութեան կաթօլիկ
հայրերը հոյակապ զօլէթ մ'ունին հոս, մա-
տուտով մ'ալ: Յոյները և կաթօլիկ Սուրիա-
ցիներն ալ ունին մէկ մէկ եկեղեցի:

Հայերու թիւը, հիմա հոս, 45-50ի

բարձրացած է, և օրէ օր աւելնալու վրայ
է, շնորհիւ Մաթոսեաններուն ուրախ ենք
ըսել, որոնց պաշտօնեաները, կը կազմեն
մեծ շահեկան մասը, մեծ մասամբ հայ-
հռովմէական, բարեբախտաբար հայտնիս և
ազգասէր:

Բացի վաճառատունէն՝ որ կը գանուի
քաղքին բազմամբոսի մէկ կեդրոնը տեղւոյս
արեւելեան հարաւային կողմը, (Սէն Լորի)
զօլէթին մօտ, Մաթոսեանները ունին նորա-
կառոյց, ընդարձակածաւալ և հոյակապ գոր-
ծարան մը, սրուն ելեքարական ժիժփուն լոյ-
սը՝ արեւմուտին՝ այլ օրհնեալ շէնքին գրանը
առջև կանգ առնել պիտի տայ երեկոյեան
շրջագայութենէն վերադարձող երկուսն ամ-
բոխը, մտերմանալու համար անունին անոր
երանելի սեփականատիրոջ՝ որ հայ մ'է
(քաւարանճի թէպէտ), կղիպտահայուն մեծ
բարերարը. Փա՛ոք և պատիւ իրենց և ի-
րենց նմաններուն:

Գործարանապետներն են կարապետ ԼՖ.
Էտիրնէլիեան, ժպտան զեմբով ու քաղցրա-
համբոյր՝ բնաւորութեամբ, ինչպէս և Միտի
կամ Մօսիւս Անթուան Միրան, առաջին
առթիւ անկլօ-սաքոնական պաղարինու-
թեամբ անմարգումօս, բայց մտերմանալէ
յետոյ բոլորովին տարբեր, սղորմածաւեր,
կրօնասէր, անտանելիօրէն տածկախօս, ընդ-
հանրապէս բոլոր պուրեցի հայ-հռովմէա-
կաններուն նման:

Կամոարականներն ալ հոս ունին ծիա-
վաճառութեան մասնաճիւղ մը, որ վերջին
տարիներս արդիւնաւէտ եղած է կրտսի շը-
նորհիւ իրենց գործակալ կարապետ ԼՖէնտի
Եւայիանի, պատուական մարդ մը բառին
պատուաբեր առումով:

Ծիալառութեան ամենամանօթ հրապա-
րակէն զտրու, զեկեցիկ բացառութիւններ ըլ-
լալով վեպերուն մէջ հայուն համար, հոս
ունինք իփլիքնեաններուն մանիֆաթօտայի
մասնաճիւղը, որուն ներկայացուցիչն է Լևոն
Էֆէնտի Մարտիկեան, ինքնավար ու հան-
գարտօրէն զուարճախօս երկուստարգ մը:

Ունինք նոյնպէս արուեստագէտ մը, հան-

րածանօթ Մէլիքը, ազնիւ, զգայուն ու խիստ համակրելի կեսաբացի երիտասարդը, որ իր ինքնաշխատութեամբ ու բիշ մ'ալ Օ. Տիրատուրեանի աջակցութեամբ փառաւոր ու մեզի համար պատուաբեր զիրք մը գրաւած է հոս, կառավարական պէտքերուն ու ամբողջ Թանթաի միակ պատկերահանը ըլլալով: Մեր «Այլօ»ն ալ ասնով հոս եկած ու միենայն արուեստով փորձեր ըրած է, բայց չէ յաջողած, կը ցափնք ըսել:

Մնացեալները կը մնան պաշտօնեայ, կօշկալաճառ, գործաւոր, արհեստաւոր, կաթնալաճառ, ծխալաճառ, դարձեալ ծխալաճառ, ամբողջը չորս ընտանիքներով, ուրոնք գրեթէ իրարմէ հեռու ու իրարու շատ անգամ անծանօթ պիտի սպրին:

Մարդկութեան մէկ անիրաւ օրէնքը, զիրքի ու աստիճանի տարբերութիւնը, անհաւասարութեան պիզմ ուղին, ուզած է գործադրել սալ իր գարշելի բմահաճոյքը, զիւրերուն մէջ հայերու քով ալ: Այսպէս, ազնուապետական ձգտումներ սենցող մարդը պիտի անհաշտ աչքով նայի միջակ զիրքի տեր վաճառականին վրայ, և այս վերջինը ինքն ալ պիտի արհամարհէ պարզ արհեստաւորը, հոգ չէ թէ այս խոնարհներու դասակարգին մէջ է որ յաճախ պիտի հանդիպինք Անդրանիկ Բագումեաններու, որոնք կ'ապրին հայութեան համար՝ խորունկ մը զգալով ահռելիութիւնը վերքին որ բացուած է հայուն սրտին վրայ: Չենք մտածեր թէ հայրենիքի հողին վրայ՝ մէկ հասակ ընտանիքի համարին զաւիներն ենք մենք, և ինչ՝ հա՞պա հեռուն, օտար ասպիներու տակ, պիզներու մէկ անկիւնը, որ ամեն ժամ պէտք է միմեանց հնչեցնել «Եղբայր եմք մեք»ը անուշ ու բնորշ Պէշիկթաշլեանին:

Օրհնեալ ըլլաւ հիմա, ո՛վ Սայիտ պետավի, որ վերջապէս լսեցիր երիտասարդի մը հառաչանքի ձայնին, ու զինքը կը վե-

րագարձնեա հօն՝ որ պատուաւոր մուրացկանութիւնը՝ ակնվետ՝ մեզի ընդառաջ՝ ուղղագործելու կըսէ:

Ողջօ՛յն Լսարան-ընթերցատան:

Ս. Օ.

Թանթա, 12 Մայիս

Յարգելի Թղթակիցը՝ նոր զեմք մը չ'է Եգիպտահայ հրապարակագրութեան մէջ, Երկիցս հագելցս ու շիջալցս Փարոսին մէջ փայլեցաւ անի տարիներ առաջ, իր սուսանական թուղթիկ նօթերով. տարիներ առաջ երգեց Մահտին ու իր նախնիները նոյն այս Լջերուն մէջ: Յարգելով տրեմն իր հնութիւնն ու զբաւերի ձրգտումները, նայնութեամբ հրատարակեցինք Թղթակցութիւնը, չը նայելով անոր ընդարձակութեան ու ծայրայեղօրէն միամիտ լուստեսութեանը, որով դատած է մարդերն ու իրերը:

Գրէ՛ սակայն, գրէ՛, գրաւէ՛ր ազայ գրէ՛ միշտ, բայց չը մոռնաս, Շէյխ Սայիտի սիրոյն, Գահիրէի Լսարան — Ընթերցատունը, որուն անմարդաձայն անկիւնէն պիտի օր մը չէ՛ օր մը շառաչէ շեփուրը Ժուլուրի յաղթանակին:

Ծ. Խ.

ԱՅ ԱՏԱԾԻ ԼԱՌԱԶ ՄԸ

ԲԱԺԱՆՈՒՄՍ

Անդգայութեան շատուած մը եղած էի Պօլիսի դժոխքէն մեկնած օրս: Ասարիական նաւու մը բարձունքը թառած, վայրկենի մը մէջ կրած ահռելի յեղաշրջումներուս մէջ, հողին ու միտքս պահ մը զողորեցան գործելէ . . .

Էօֆ շա՛տ անկատար է սա Մարդը . . .

Յաւը ունի սպունգացնող ազդեցութիւնը մարդուն վրայ: Վիշտերու բազմա-

խառն ողորմի մը տակ, այդ անկատար արարածը վատութիւն է: Չգացումները կը գաղթին յանկարծ իր սրտին մէջ ու որոտացող փոթորիկներու առջև, լալն ծախն վերայ սարուբերող յուսահատ նաւակը կը գահնայ ան: Ինք իր տէրը չէ: Էրականութիւն մը այս, ճշմարիտ ամէն անանց համար՝ որոնք վայելած են այդ կեանքը ցուերու առատ պոսթիլումով մը յագեցած կենցաղ—միմուռութիւն մը մէջ:

Բայց խինդը:

Այրած չէ՛ ան սր Յաւերու կատարեալ անդգայացնող շունչերէ ետք՝ ունեցած չէ նաև անդգայացնող ներշնչումները պոսթիլացող հրճուանքներուն: Էս անդգայ մըն էի Պոլիսի գոթերէն մեկնած պահուստ, բայց անդգան՝ բաժանումիս անուշ երջանկութեան, զինով—ան՝ զգան՝ ուրակութեան զինիին, խնթը յանկարծական փոփոխութեանս:

Ալ պիտի չտեսնէի վայրագ զեմբերը այն թշնամիներուն՝ գահնակի չափ հեղ:

Միտքս ալ պիտի կրնար գործել այնպէս որպէս կ'ըզար իր ամէնէն աւելի տաղնասպտ ծամերուն խոյ:

Հոգին ինքը պիտի ըլլար, այնպէս ինչպէս սր էր իրականութեան մէջ: Պիտի ըլլար իմ հոգին:

Ես պիտի ըլլայի ես:

Ես պիտի գաղթէի կեղծատար մը ըլլալէ: Ալ պիտի ծծէի շունչը ազատ Մասժումին:

Ես առո՛ր համար խնդուցիւններու այն փղձկումին տակ անդգայ զանգուած մը գարցած միտքս կը գարնուէր գոնկիս անհանգիստ կընէր զիս:

Ալ առոր համար ես լացի այն վայրկենին ուր ազատ զգացի այ ինքզինքս:

Այնքան ատեն որ ազատութիւններու մէջ կը սողոսկի, ապիկար դժուարութիւններու շարժումի մը տակ ըստիպեալ թարցում, լաց չ'էր պար խնթի սանջան:

ըր զիրութեանս: Բայց այն օրը ուր միտքիս շարժը անցում խեղդող շղթան փրկած ահապ ու ինքզինքիս ակըր եղայ այն օրը լացուց զիս

Ազատութիւններու լոնի փառաբանանքներու այս զրիչս հոն, գիտնաբարչ այն գահնութիւններուն մէջ՝ որոնց ակամայ տուածացումը բրաւ այս զրիչս հոն, սրգեր որոնք մտափառութեան ու զեղխութեան ծառուովը կուրցած, սիրական ազգիս կուրծքը կը փարեն: Այս ամարիշտ զրիչս բրաւ այդ ամենը, ու եթէ երբէք մերթ շեղում մը ունեցաւ ու ծառայեց իրեն հրամայող մտքին անկեղծութեան, ա՛հ այդ շեղումը արիւն ու առաւապանք ու ասեղութիւն արժեց իրեն

Պոլիսը կը միանէր աչքիս, հրը շոգենար տակաւ կը հեռանար ափսոսքէն: Կը միանէր. — Յ՛հ ո՛չ, մեռած Պոլիսը կը թագելի՛ն . . . խաղաւ մըն էր ան խնթի համար, արդէն շատոնց մեռած ու փատիլ ալ սկսած գիակի մը, սը Պոլիսի բարոյական ու մաս սրտիան սփինն է:

Երկու աստիներու շարունակական զըրչի կեանքիս առաւապանքն էր սը յանկարծ թօթափում ահապ ու փայլուն զեղեցիկ վառվառն կնաջ մը պէս, Ազատութեան հեռանկարը ցցուեցաւ աչքերուս գեմ պատկերը ինքնիշխանութեանս զոր ես պաշտեցի այնպէս ինչպէս երբէք չէի պաշտած, ու անոր առջեր ծնրազիր բրած խնկարկութիւններո՛ւ մեծագոյն հրճուանքս շինեցին:

Պէտք էր որ շատոնց խեղդած, լըմնցուցած ըլլայի արդէն ես այդ կուրցս, սպրկու համար շուայտ կեանքովը Պոլիսին: Բայց չ'կրցայ. պահեցի զայն գաղտակ, կուրծքիս տակ, մասունքի մը պէս սիրական, անյայտ, անժանօթ, ու անձայն սնուցի երկա՛ր ատեն . . .

Էս մէկ կողմէն անհեցաւ ան, և միտքս զարմանակի մը չափ յարուած, առաւ վերջին հարուած— սրաշումը, ու ինքզինքս նկ-

ՇՂԹԱՅԻՍ ՀԵՏ

(ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐՈՒՆ)

Խաւար չորսդիւս լուծիւմ մը մեռելալիւմ
 Արհաւիրքներ տամջող հոգւոյ մէջ կը մային
 Կը շարժեմ քեզ, շղթա՛ս, բանտիս մեծիկ ընկեր
 Անուշ բան մը կայ ծայնիդ մէջ, սարսուռ շեշտեր
 Դժգոհ հեծիւմ մը կարծես թէ բազմիմ դէմ չար
 Որ պրկելու սահմանեց քեզ թշուառներ յար
 զինակակից մըն ես ինծի դուն խեղճ շղթաս,
 Կաշկամողումիս մէջ ինծի հետ դուն կը դողաս
 Դուն որ երբեմն, զէ՞քի ձեւիմ տակ ամրաժան
 Կը ծաղրէիր սպառնացող մահը դաժան
 Դո՛ւմ ալ հիմա սա խորշիմ մէջ, մթին, մեղ, ցած,
 Հետս ես շղթա՛ս. դուն կաշկամող մը կաշկամողւած
 Կը գրկեմ քեզ ու կը սեղմեմ ուժգին սրտիս
 Ի՞նչ փոյթ ամարգ ուրիշներուն թէ կը թրւէս
 Ինծի համար միջոց մ'ես Սուրբ Ազատութեաց
 Կապուածներ լոկ ընդվզումի տե՛նչ կ'զգամ
 Ես կը կարդամ օղակներու մէջ կտակը,
 Անոնց՝ որոնք հանգչին հիմա հողիմ տակը,
 Անոնց՝ որոնց համբոյրը տաք կըզլամ ճակտիս,
 Անոնց՝ որոնց հոգիմ եղբայր կառուածէ զիս,
 Անոնց՝ որոնք յաղթանակը կը լը՛ւա՛նան,
 Մահուան գրկիմ մէջ, երազիմ այն իրական,
 Մարդագործուած ստրկութեան կեղտ աղարսէն
 Գիղձ կապերը որուն՝ սրտերը կ'աղարտեն
 Գէ՛տք է մաքրել այդ սրտերը վատասերած,
 Այդ սրտերը, լուծիմ մերքեւ հըլու եւ ցած
 Գէ՛տք է մաքրել ու մկրտել պէ՛տք է նորին,
 Կռիւի մէջ, ու տե՛նչագին, գիտակցօրէն,
 Թափուած արեան հեղեղներով յորդ ու առատ,
 Մինչեւ որ ա՛լ չիմընայ հոն ո՛չ մի արատ
 Ստրկութեան սեւ դարերու կապած ժանգին
 Մինչեւ վառիմ սուրբ իղձովը Ազատ Կեանքիմ
 Խեղճ հայրենիք, քեզ որ յամախ հերոսներու
 Ոռոգած է արիւնն ազնիւ ու կեանատու,
 Հիմա աւա՛ղ, թօշմած է ալ ժպիտըդ վէս,
 Հըլուօրէն թափուող սաւած արեան ի սես
 Դու որ երբեմն երգեցիր երգն հոգիներուն
 Յաղթանակիմ, հիմայ իրպնոտ ու երբունն,
 Մարդագործիմ հոսող արիւնը կը սըզաս,
 Ու կը դիտես յուսահատած կեանքիդ օրհաս
 Շոգիացո՛ւր հիմ արիւնը՝ որ ծըծեցիր,
 Խմե՛ն, շնչե՛ն անոր շոգիմ թող անձամծիր
 Թերես անոնց թմրած սրտերը արթնանմ,
 Եւ ըսթափին այն հոգիները անկե՛նդան
 Թերես ցնցուիմ, թօթունն լուծիմ ծանրը բեռը
 Թերես զարթնուն, ըզգամ անոնց պաղ սրտերը
 Ու այդ շոգիմ՝ դադրեցընէ թերես լացը,
 Ու այդ շոգիմ՝ թերես վառէ վեհ մախանծը
 Թերես անոնց աչքերէն ա՛լ արցունքի տեղ,
 Ու շրթներէն ողբի փոխան խուլ ու տըզեղ,
 Ցայտէ՛ բոցը վրէժիմ արդար, նըլիրական,
 Բոցը մաքրող սրբող՝ ժանգերը գերութեան

Խաւար չորս դիւս, մահուան սա սե ստուերներուն
 Մէջէն աչքեր արիւնտած ու սեռուուն,
 Անէ՛ծքով մը կ'ուղղուիմ ինծի. «Չի՛ բաւեր այն—
 ջեր հայուած քէն ես չեմ ուզեր երբէք խոյս տալ,
 Այդ արիւնը ձեր անտարբեր ճակտիմ վրայ
 Լոկ զերդ անէ՛ծք՝ զոհուողներէ՛մ՝ պիտի մնայ
 Դուք լուտա՛նք մ'էք՝ մեռուած հեզուտ ճակ-
 տիմ ձեր մօր
 Դուք զզուա՛նքն էք, դուք սլծգա՛նքն էք սերունդի՛ր
 Որ,

Որուն տըկար, որուն մատղաշ ուսիմ վըրայ,
 Մաքկութեան ձեր սե մեղքը կը ծանրանայ
 Զէ՛, այդ արեան գետերը լոկ ճամբաներ եմ,
 Որոնց մէջէն ձեր զաւակները բռնօրէն
 Մաքառելով պիտի դիմեն դէպի Յոյսը
 Սե արիւնէն աղօտացած դէպ՛ այն լոյսը
 Կոյէ՛ք, ձեզ դէմ մոյժ իսկ շղթաս կը մըռընչէ,
 Ո՛հ, կը փախչի՛ք զիտէք ու ան՝ գերիիմ չէ՛

* * *

Խաւար . . . վերջիմ գիշերս է ա՛լ : Ո՛ւր եմ
 արդեօք,
 Մա՛յրս. հա՛յրս թշուառ, արդե՛օք Ա՛ն, ո՛ւր է Ան-
 չոզի՛ս, սէ՛րս, աւա՛ղ, կուլա՛ն . . կուլա՛ն . . .
 կուլա՛ն . . .

Ո՛ւր է՛ք. ա՛լս ո՛ւր . . .
 Զեզ գրկելու համար յոգնած թեքս ի գո՛ւր
 Կը տարածեմ, ա՛հ, չի թողուր շղթաս, Աստուած
 Սիրածներուս փոխան կուլամ շղթաս գրկած . . .
 Սակայն հերի՛ք, սէտք չէ փղծկիլ այս հուսկ պա .
 հուն

Չաներ աղօտ, խուլ, կարթնան արդէն հեռուն
 Զէ՛, ալ դաղրէ՛ դուն, յիմա՛ր սիրտ սըրոփելէն
 Եթէ երբէք դեռ կայ մէջըդ մի փոքր հիւլէն
 Ապրելու խօլ տե՛նչիմ, քեզ վա՛տ, կը կոխտես
 Ոտքերուս տակ. Հեռո՛ւ ինէ՛ դարձիմ վըսեմ
 Այս հուսկ ժամուն, հեռո՛ւ ինէ՛ յոյզեր տըկար
 Սիրտըս երկաթ պէտք է ըլլայ, մարմինըս քար
 Գէտք չէ դառնամ ետիս այլևս, այլ միշտ առաջ,
 Ինծի համար պէտք է դաղրի ամեն հառաջ
 Թափուող արիւնն չայրենիքիմ համար՝ պէտք է՛
 Զիրծ ըլլայ միշտ վախի, վշտի ամեն հետքէ
 Դահլիճն երբ գայ զիս առնելու, ես իրեն դէմ,
 Հըպարտ ու սէզ ժպիտով մը պիտի ելլեմ
 Անօգնական, յոխորտագին գլուխըս վեր
 Բռնած, հըպարտ, հաստատ Քայլով ու աներբ՝
 Ինչպէս նախկին մարտիրոսները հաւատքիմ,
 Բայց ոչ անոնց պէս ներուհով մը սրտագին,
 Այլ անէ՛ծքով մ՛ չայրենիքըս տանջողներուն՝
 Գիտի դիմեմ կախաղանիմ, որուն վըրայ,
 Ընկերներուս արիւնը դեռ թաց կը մըխայ
 Զեռքերովըս պիտ՛ անցընեմ՝ իր օղակը,
 Իտէալիս յաղթանակիմ այն պըսակը
 Աղաղակս ալ, Կիմ Մահ կամ Ազատութիւն, . .
 Գիտի մահուան իսկ չի խղրէ խուլ հըռըդիւմ
 Ու այն ատեն . . .

Ու այն ատեն դո՛ւմ ալ շղթա՛ս,
 Դահլիճներուս վըրայ ապշած պիտի խնդաս
 Շո՛ւնչելով վերջիմ կոչըս պիտի հմչես,
 Այդ բռնելով քեզ կտակուած վերջիմ շունչէս :

* * *

ԿԱՐԱԻԱՆԸ

Կը շարժի, մեկնեցաւ կարաւանը մեծ քաղքին .
 Յերեկուան վազուկները դադրած՝ մըտան անկողին .
 Խորդացոյ քաղքին լախնն ու երկայնքը, խուլ, խառնակ
 Աղաղակ մէ կը վազէ հրապարակէ հրապարակ .
 Յայգապահ ջջիրը, ոտքի վրայ, չ'ի քընտնար,
 Անխիզճնե՛ր, կը խառնեն խորունկ քունը սփոխարար՝
 Երջանիկ պառկոյններուն՝ գիրիը գրախա Երազին,
 Մինչ ինչաւ կարաւանն ուղին անհուն Աւազին :
 Առաջնորդ աւանակը կարաւանին առջևէն,
 Հեզ, խոնարհ, զրոյսը կախ, ծունկերը կը գեղկեն
 Ու կարծես գիտակից՝ պաշտօնին բարձր ու փափուկ,
 Անտրաունջ կը տանի ճամբուն տաժանքն ու տաղտուկ .
 Ուղտերը բեռներուն տակ, համբերատար ոգիով,
 Կը բալին անդադար, պաղ արինով, անվրդով .
 Չիերը, միայն ձիերը խրինջուն, կը կոխեն
 Աւազը, զատուիլ կ'ուզեն յամբ ու գանդազ ամբոխէն :

Չիաւոր, հեռակ, երկու սեռէ ուղտը
 Ամբոխը խաղաղէն ու խնդաղէն՝ բեռնաւոր
 Ուղտերուն զուգընթաց՝ կ'ընէ ճանքան գիշերուան
 Գաւաճան ըստուերներուն մէջէն : Քալէ՛, կարաւան,
 Աւազի սվիխանին նաւատարմի՛դ կենդանի,
 Քալէ՛ խրոխտ, աներկիւղ, ուր Գործը քեզ կը ամնի .
 Մի՛ նայիր ետիդ, վըստահ, հըզարտ, քալէ՛ ու քալէ՛ .
 Երամակը քրտինքին մէջ, բեռին տակ տըպէ
 Թո՛ղ թասէ, զուն ճամբազ շարունակէ՛, մի՛ աններ
 Կանդ ուրեք. գիտեմ ծանր, այո՛, ծանր են քու բեռներ,
 Բայց յարգի՛ ու թանկագի՛ն : Անցի՛ր, ականջ մի՛ կախեր
 Աւազի բըզկոյններուն, ասոնք ուղիդ չեն փոխեր :
 Վեր նայէ՛, բոցաչափ ազջիկները կապոյտին,
 Բիրբեղէ գարգաններէն վար կը նային , կը ժպտին .
 Թաղուհին իրենց մէջէն կանցնի շքեղ , նազանքով .
 Առաջնորդ էշ, քալէ յոխորա՛ ուղտին, եզան բով :

Ու կանցնի կարաւանը լուսընկայ պարզ գիշերով,
 Խաւարի փորձներուն մէջէն զըւարթ , անխրտով :
 Մինչ ժօռն , հեռիէն ականջներուն կը հասնին
 Մընչիւնը յովազներուն , որոնք լոյսովը լուսնին,
 Հետամուտ՝ որսերու, կը թափառին անսըւազ .
 Կամ վիճի մը վրայ կախուած, թուրը քարայր ու կազազ .
 Կոծուիլը վիրաւոր , օրհասական քած արջին,
 Որ թօփունն է կորուսեր, լիճ աչքերը կը կապչին

Սեպ մեռին, որուն գագթէն թրուաւ սուրղ զնոսիը
 Ու զետին տապալեց անճոռնի, յաղթ հասալը.
 Աշխարանքը ահտուան զոռուն գետի մեզերքէն,
 Ղաղաղուն ազաւաներուն որոնք խնձոյք մը կերպին
 Պար բնած բոլորտիքը զիտի մը զեռ ջերմին.
 Հաշիւը սե շուներուն ուրտի մը զէմ անմարմին,
 Շըշիւնը թուի ու զեղին, խայտաբոլոս օձերուն
 Պըլլուած՝ իրաններու, պրկուածներով գալարպն:

Քայց կտրե՛ց կարաւանը խաւարախուն անապատ,
 Դարու չափ զիշերներ մաքառելով անլըհատ,
 Քաղցին գէ՛մ ու ծարաւին, աւազայոյ մըրըրկին,
 Ոտքին տակ Աւազաւը, գլխուն վերեւ մերկ երկին,
 փոքր ու մեծ Անհուններուն միջև շարժուն ինք Հիւլէն՝
 Ծաղրելով ա՛ն ու մահ: Քալելէն ու քալելէն,
 Ահա մօտ է ողջունել օթեանը ցանկալի:
 Ու ախար ոռնումները քանասարքի յազալի,
 խառնուած հաշիւներու, մայիւններու, կ'աւեան
 Հօտերու, վրաններու գոյաթիւնը: Շատ մօտէն
 Լըսուեցաւ այգուն երգն աւետաբեր ազգորին,
 Չիբրուն սարերուն տակ՝ աւազները կը գորին,
 Շնուին զունչը վերածբարձ՝ երկինքն ի վեր կը հաշեն,
 խօշիւնէն անտաններուն, առուակներուն կարկաչէն,
 Կը սարսալ կարաւանը, հասաւ ահա՛ իր կայքը.
 Ծիրանի Արեւելէն կը ծիծաղի Սուրբ Այգը...

13 Յունիս 1903

ՍՄ. ԲԻԻՄՍ

Ա. Գեքսանյորիա

ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹ

Բարեգի Լա Ռըվիլ (նախկին Ռըվիլ
 սէ Ռըվիլ) ն այս ամսուան 13ի թիւին մէջ
 հրատարակած է «Արդի յոյն Գրական-
 նութեան շարժումը» վերնագրով ընդար-
 ճակ յօդուած մը, 16 մեծ էջերէ բաղկա-
 ցած, յաւեա ողբացեալ Տիգրան Երկաթի
 անախ զբուածներուն լաւագոյնը, որ երբէք
 հրատարակուած ըլլայ հեղին զրականո-
 թեան վրայ, ինչպէս որ կը գրէ Յունաս-
 տանի. զես փայլող փառքերէն մին Ժան
 Մ'Լանտը, համառօտ բայց զեղեցիկ երեք

էջերով, նուիրուած՝ Տիգրան Երկաթին, նոյն
 հանդիտին մէջ, ուր յոյն բանաստեղծը 'ի
 վեր հանած է զեղեցիկութիւնները յօդուա-
 ծին Տիգրան Երկաթին, զոր ինք կ'անուա-
 րէ «Արեւելիի անքաղղասեղի ծաղիկը»

Համարելի Հեղինը յիշատակած է այդ
 առթիւ Երկաթին մօր՝ անմիթար Տիկին
 Պիլեզիքճիին՝ և Երկաթին կըբօր՝ Տիար
 Մարտիրոս Պիլեզիկճիի ջանքերը, կարգի
 զնեղու և ի լոյս հանել սալու համար իրենց
 անմահ սիրականին թանկագին ձեռագիր-
 ները:

Առաջիկայ Յովիտին հրատարակելի ֆիլանթիկ օրաթերթին Ա. թիւին մէջ մեր Պատ. ընթերցողները սիրտի հաճոյքով կարգան հայերէն թարգմանութիւնը սոյն յօդուածին, որուն համար Ժան Մէանարը կը գրէ թէ՛ յայտնութիւն մեղաւ հեղին աշխարհին մէջ:

Այսպէս որեմն, Տիգրան Երկաթ, իր գերեզմանին մէջէն կը վերերի երկնային ոգի մը, աւելի պայծառ, աւելի շողջօրուն ու մենք իրեն կը վերադարձնենք իր «Մա. հաւերձ ֆերթոյ» ին վերջին տողը. «Պի. սի մահուան մէջ վերկենցաղիս դուն...»:

ՕՏԵԱՆ—ԹԷՕՖԻԼ ՄԻՋԱԴԷՊԸ

Մայիս 30ի շաբաթ օրուան տըխտոր ու աղեղ այդ միջադէպը, ա՛յնքան գէշ սկսուած բայց ա՛յնքան ալ լաւ վերջացած կը կարծէինք. գէշ սկսուած, որովհետեւ Ալեքսանդրիայ մեր համայնքէն միշտ սիրուած ու յարգուած բ՛լշկ մը, Տօքթ. Թէօֆիլ Յակոբեան, բարբառ բարկութեան մը վայրկեանին ինքզինքէն զտրուելով, ինչպէս որ է, կը վերադառնար Ազատ Բնակ սնօրէն մեր եղբայրակից Ե. Օտեանը. լաւ վերջացած, որովհետեւ գլխին վերքը գեղ տաք, իր բարեկամներէն ոմանց փափաքին համաձայն, վերադարձ ֕տեանը Մէնշիկի տատիկանատան մէջ Տօքթօր Թէօֆիլի հետ հաշտուած ըլլալը կը յայտարարէ մուսուլմանին ու միւս պաշտօնեաներու առջեւ, ինքնակայութեան բանի մը բարեկամներու:—

Հաշտութեան լուրը կրկնապատկեց Օտեանի նկատմամբ սնուցուած հանրային համակրանքը, զի Օտեան, այդ հաշտութեամբ, ցոյց տուաւ թէ խմբագրի պաշտօնին բարձրութեանը վրայ կը գտնուի, և նախաձեռնող Ստեփաննոսին. եթէ ո՛չ հաւատարմ, գէթ ներսը սիրաբը կը կրէ հանգեղ իր թշնամիներուն:

Բայց այդ լուրը քիչ յետոյ հերքուեցաւ. մէկ երկու օր ետքը լսեցինք թէ՛ զատ բացած է աօքթօրին գէլ:

Մենք չենք կրնար չը պարտաւել մեր յարգելի Տօքթօրը խմբագրի մը հետ զաւազանով խօսելուն համար, սակայն ոչ նուազ պարտաւելի կը գտնենք և մեր եղբայրակցին Տիար Երուանդ Օտեանի յոյզողովութիւնը չըսելու համար փոփոխամտութիւնը որչա՛փ ալ հզօր ըլլայ իր այդ վարձուքին արգարացուցիչ պատճառը:

ՀԱՅ ՍՄԱՍՐՆԵՐԸ

Նախընթաց թիւին մէջ գրած էինք թէ քննութիւն բացած ենք երկու հայ աւսարներու գործին վրայ:

Մասնուած չորս հայրենակիցները, Տեարք Խաչատար Տէր Խաչատուրեան, Աբրահամ Տէր Պօղոսեան, Յովհաննէս Խաչատուրեան, Գրիգոր Խաչուկեան, չորսն ալ Խարբըղի Ղալա գիւղէն, անցած շաբթուան մէջ վերադարձան Պերուլին: Իրենց բացարձակ յայտարարութենէն կը հասկցուի թէ՛ մատնութեան մը զոհ եղած են ... Ամբաստանուած աւսարներն էին Ռուբէն յումուրգաշեան ու Ալեքսիս Էրֆիկեան (մեանուրը). բայց քննութեան ընթացքին, 10 ներկայ ամսաթուով և 24 պարկեշտ ազգայիններու ստորադրութեամբ մեզի ուղղեալ գրութենէ մը կը հասկցուի թէ՛ մենուները մակդիրով ծանօթ ֆերֆիչեան անմեղ մըն է այս գործին մէջ:

Պերուլին վերադարձող մեր այդ խեղճ հայրենակիցները բանի մ'օր հոն բանադրուած ու լաւ մը կոզսպտուելէ ետքը կրցեր են ազատուիլ: Կը լսենք թէ տասնք զեմած են Աղզ. Առաջնորդարանը: Տեսնենք ին՛չ սիրտի սնօրինէ մեր խնամակալութիւնը Պամուրգաշ կոչուած այդ մարդակերպին համար որ, կըսուի, Մարտիկէն հոս աքսուուած է իր թաւի վարքին համար:

Այս ա՛յն Սամուրգաշն՝ է սրուն ա-
նունը սեղիս մաքրատան մէջ Ստոր կֆէնտի
Շէրթճեանի անյայտացած թղթապանակին
հետ յիշուեցաւ անցածները :

Մասնիչներուն ձեռքէն փախած հոս
եկած ենք. պէտք է գտնական պատիժ մը
տալ անոնց :

ՇԱՀԵՆ - ՄԻՑ

Ողբացեալ Շահէն Մխոյի մեծադիր
պատկերէն ո՛վ որ կը փափագի ունենալ,
թո՛ղ դիմէ Պ. Յ. ԳՐԻԳՈՐԵԱՆԻ Խանո-
թը, Սուգ ել թուո՛ւք, վե՛հալեր ել թ՛խր-
պանի, թիւ 34, Աղեքսանդրիա :

Հասոյթը յատկացուած է Գահիրէի Լուս-
բան-Ընթերցասան :

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՓԻՆԻԿԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ներկայ Բացառիկ Պրակտիկ կը փա-
կենք « ֆիւնիկ » շաբաթաթերթին Գ.
Տարեշրջանը, Պատ. Ընթերցողներուն
ներդաման թիւնը ինչպէսզէր սկսածայ յա-
պազումին համար զոր կրեց այս վերջին
թիւը Տղարանին հիմնարկութեան, ան-
զափոխութեան և արիչ անհրաժեշտ պատ-
րաստութեանց պատճառով :

ՕՐԱԹԵՐԹԸ, ինչպէս խոստացած ենք
արդէն, պիտի սկսի հրատարակուիլ առա-
ջիկայ Յոյիսին, Արտասահմանի մէջ ա-
ռաջին անգամն ըլլալով օրաթերթի մը հրա-
տարակութիւնը, ամեն ջանք և զոհոյո-
թիւն ի գործ դրինք ապահովելու համար
անոր կանոնաւոր, անխափան հրատարա-
կութիւնն ու յարատեւութիւնը :

Արդէն, ամիս մը կայ սը Արտասահմա-
նի ամեն հայազատ կեդրոններէն կը սե-
ղան թղթակցութիւններ, զրական, գիտա-
կան, բանասիրական, քաղաքական և ու-
րիչ ո՛չ նուազ շահեկան յօդուածներ, հրա-
տարակուելու համար մեր օրաթերթին մէջ :

Ուրախ ենք յայտարարել թէ՛ ձեռնհաս,
փորձ, հմուտ և մեծանուն աշխատակից-
ներու պատկառելի թիւ մասինք. զրեթէ
մեծ մասը պատրաստ՝ անձնուիրաբար
« ֆիւնիկ » ին ի սպաս գնելու իրենց ա՛յն-
քան սիրուած ու գնահատուած զրիչը : Ա-
սոնց մէջ են Գիտութեանց ուսուցիչներ,
ազատ խորհողներ, բանաստեղծներ, խրմ-
բագիրներ, ևն :

ԿՈՁ ՄԸ

Տիար Համարձուժ Երամեանի սուսոյ-
չական ասպարիլին և իր համանուն վար-
ժարանին հիմնարկութեան 25 ամեակին ա-
ռիթովը, Գահիրէի մէջ ալ կազմուած է
Յանձնախումբ մը, հետեւեալ անձերէ.

Գեր. Տ. Յովսէփ Եգիսիպոս, Նախագահ
Արժ. Տ. Ա. Ետիս Շաղոյեան

Վսեմ Մ. Մարխոսֆ Պէյ, Ատենապետ
Տեարք Յովհ. Սեթեան Ատենապետ

» Տոգթ. Մախսեան

» Յ. Օհանեան

» Յ. Փէրիզեան

Պատ. Յանձնախումբը կոչուած կ'ընէ Ե-
գիպտահայ հասարակութեան կըթասիրական
զգացումներուն և կը յուսայ թէ ամեն ազ-
գային պիտի փութայ իր լուծալով մասնակի-
ցիլ ձեռնարկուած հանգանակութեան, որուն
հասոյթովը վճարայ մէջ պիտի կառուցուի վար-
ժարանի շէնք մը, վարձատրելու համար
աչազօրի Տիար Հ. Ելամեանի անհանջ,
անձուէր ու արդիւնաշատ գործունէութիւնը :

Այս գեղեցիկ առթիւ կը ծանուցանենք
թէ՛ ըիչ ատենէն ֆիւնիկի խորագրութեան
կոչմէն Սիսուան Տղարանին մէջ պիտի հը-
րատարակուի Համասօս կենսազրութիւնը
վաստակաւոր Յարկեարին :

ՀԱՅՏԵՒ

Մեր Պատ. կրայրա՛կիցը Տիար Տիրան
Փափաղեան վերոկաւ իր շաբաթաթերթին
հրատարակութիւնը քաղաքիս մէջ : Ամսոյ
52ին Ա. թիւը ստացանք շնորհակալու-
թեամբ :

Մեր սրտագին ինչպակցութիւնները :

ՀԱՅ ԾՆՈՂՔՆԵՐՈՒ
ԱՐԵՒԷԼԵԱՆ ԳԻՇԵՐՈԹԻՎ ԿՐԹԱՏՈՒՆ
Հոգան, Զուխցերիա
ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Արեւելեան կամ հայկական կրթատունը կ'ընդունի 10էն 20 տարեկան աշակերտներ, որոնց կուսայ, ծնողքներու բաղձանքին համեմատ, գիտական, գրական, առևտրական կամ արհեստագիտական տողջ ու հիմնաւոր կրթութիւն մը, ներդաշնակօրէն միացած ազգային հիմնական պատարարութեան մը հետ: Մեր հայ աշակերտներուն կ'աւանդենք, և այս՝ առանց ունի վճարումի. հայերէն լեզու, հայ. պատմութիւն, հայ մատենագրութեան պատմութիւն, ևն:

Արեւելեան կրթատան տարեթուշակը հակառակ իր ընծայած բազմաթիւ խրակալն առուելութիւններուն, անմրցելի կերպով շափաւոր է:

Հայ ծնողներու համար մասնաւոր պայմաններ: Ընտանեկան կեանք:

Կրթատան յայտագիրն ամեն ազգիի կը դրկուի:

ՏԵՐԵՆ Մ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ
Տարբ. Ի Գիտութիւնս

Համալսարանական մասնաւոր Ուսուցիչ

ՕՐԲԼ ՊՐՈՒՍԱ

ԱՂԵՔՍ ԼԳՐԻԱ ՄԱՆՁԻՆԻ ՓՈՂՈՑ
ՕՐԲԼ ՊՐՈՍԱՐԻ ԵՏԵԻ

Քաղաքիս մէջ մեծակ մտքուր, ընդարձակ, ծովեղերեայ, օդասուն ու մեծակ շքեղ հայ օթէլն է Պրոուսա օթէլը որ Էամբուրցը կը գանձէ ամեն կերպով հանգստութիւնս:

Այս նորահաստատ հայկական հիւրանոցին համար ս'ըբան ալ գովեսաւըսայ, քիչ է:

Ամեն ճամբարդ սր Աղեքսանդրիա կ'ելէ, թո՛ղ լինէ Պրոուսա օթէլը Մանչինի փողոց, Օթէլ Պոնարի ետինս:

ՅՈՎՀԱՆՆԷՍ Ս. ԹԱՇՃԵԱՆ

Աթթարինի մեծ փողոցին վերի ծայրը աջ կողմի թիւ 82 խանութը.

Փայտ, Փայտածուխ, Քարածուխ, Քարիչ, Սփիրթօ, ևն:

Մեծաքանակ ու փոքրաքանակ վաճառում.

Յանձնարարութիւնները կը կատարուին անմիջապէս, յաճախորդներուն բնակարանները յանձնուելու պայմանով:

Խանութը միշտ բաց է առաւօտեան ժամը 6 1)2 էն մինչև երեկոյեան ժամը 8:

Ճշգրտագուշակութիւն, արդար կշիւք և աժանութիւն:

ԳՆՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԻՎ

Դիմեցէք և Փորձեցէք

Աթթարինի վերջին ծայրի աջ կողմը թիւ 82 խանութը:

ԲԱՅՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՓԻԻՆԻԿ

ԱՄՆԵՐԵԱՅ ԹԵՐԹԻՆ

Որ կ'սկսի այս տարուան Յուլիան հրատարակուիլ Ալեքսանդրիա, նոյն օրը թեամբ և հարստ պարունակութեամբ:

Սկեհօրեայ փիլոսոփի խմբագիր-Տնօրէն է ՍՄԲԱՏ ԲԻԻՐԱՏ, որուն պատի աշխատակցին երկու օգնական-խմբագիրներ ու մէկ աւելի թղթակիցներ:

ՊԱՅՄԱՆՔ

Բաժանորդագրութիւնը կը սկսի ամեն ամսայ սկիզբէն և կէսէն:

Չեղքէ կը ծախուի հատը հինգ միլիէմի:

ԵՌԱՄՍ · ՎԵՑԱՄՍ · ՏԱՐԵՎ ·

Եղիպտոս դր.	30	60	120
Աբտասահման ֆր.	10	20	40
Ամերիկա տօլար	2	4	8
Էթովիան տօլար	4	8	1

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Երոզայի հայ Ուս. Միութեան Ազատ Գրադարանի վերջին հրատարակութիւններէն ստացած ենք հետեւեալները.

Ապոստոլ Սասունը, Հայրենասերի շաղերը, Հայուհիներին ու Հերոսը: Այս չորս գրքոյկներն ալ պէտք է որ գանուին ամեն հայու ձեռքը:

Հայրենասերի Տաղերը գրքոյկը կը պարունակէ անմահ Նալբանդեանի երգերուն ընտրեալագոյնները: Միւս գրքոյկները յուզիչ պատկերներ են յեզափոխական կեանքէն: Խորաբանչեւը գրքոյկը կը վաճառուի 1 դրշ. ողջի:

ԶԵՅՈՒՆՑԻՆ

ԶԵՅՈՒՆԻ ԱՆՅԵԱՂԷՆ ՈՒ ՆԵՐԿԱՅԷՆ

Բ. շՍ ՏՈՐ

ԲԱՐԻՁ

Գին 10 դրշ. ողջ եղիպոսոսի համար
Գինի «Սիսուան» տպարանը

ԱՌԻԹՆ Է

Մեկնումի պատճառով ծախու գրուած է հոյակապ պրուսալո Դաշնակ յը Տիար Ճ. Բարազեանի բով, Մտղէլ փողոց, 7:

Առիթն է, Առիթն է, Առիթն է:

ՀԱՄԲԱՐ ԴԱԽԻԹԵԱՆ

ՎԱՏԱՌԱԿԱՆ ԴԵՐՁԱԿ

Արքայինի մզկիթին դիմաց Մեծ Միրասով խանութը կը գործածէ՝ սովորաբար անգլիական ու ֆրանսական տուրն ու աղնի կերպանները, չափաւոր գներով, գոհացնելով մինչև իսկ ամենէն նրբաճաշակ յաճախորդներն ու յարգելով իրենց ամենափոքր դիտողութիւնները: Եր պատրաստէ, ի պահանջի հարկին, 24 ժամուան մէջ, ամբողջ գոտիւմ մը: Հարեւր դրուչի առևտուրի փոխարէն յաճախորդը կ'ստանայ հարիւր հատ վաճառականական գրոշմաթուղթ, որ հոս կը ծախուի: Դիմեցե՛ք Մեծ Միրասով խանութը:



Թէլէֆոն 33

Նամակատուի թիւ 398

ՓԱՄԱՑՈՑՆԵՐ. ԳՈՀԱՐՆԵՐ. ԱԴԱՄԱՆԳՆԵՐ. ԱԿՆՈՑՆԵՐ.

L. KRAMER & C°

Հայրապետի Ն. Խ. Բարձրմրեանի

ՄՈՒՍՔԻ ՓՈՂՈՑ. ԳԱՀԻՐԷ. ԵԳԻՊՏՈՍ

ԳՈՐԾԱՏՈՐՆ ԳՈՂԱՐԵՂԵՆԱԳ

Աղեխանդրիս, Տպարան ՄԻՍՈՒԱՆ

